Համաժողովի հարգելի մասնակիցներ և հյուրեր

Նախ և առաջ թույլ տվեք Արցախի մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարարության անունից ողջունել Ձեզ և երախտագիտություն հայտնել Էկոտուրիզը Հայաստանում համաժողովի կազմակերպիչներին այս ամբիոնի տրամադրման և հիանալի միջոցառում կազմակերպելու համար: Այս համաժողովը, երեք տարիների ընթացքում վեր է ածվել յուրահատուկ ու կարևոր մի հարթակի, որտեղ մտքեր են փոխանակվում հայկական զբոսաշրջային արդյունքի կարևորագույն բաղադրիչ համարվող էկոտուրիզմի վերաբերյալ:

Վերջին տարիներին համաշխարհային զբոսաշրջության ակտիվ զարգացումը իհարկե հարցեր է առաջացրել կապված ընդունող երկրներում կամ տարածաշրջաններում զբոսաշրջիկների մեծ հոսքերի կառավարման և ժառանգության պահպանության հետ: Պատահական չէ, որ ՄԱԿ զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության կողմից որդեգրած զբոսաշրջության կայուն զարգացման քաղաքականությունը մեծ տարածում է գտել նաև զբոսաշրջային ուղղությունների զարգացման համար պատասխանատու պետական մարմինների, զբոսաշրջության խորհուրդների և այլ շահառուների շրջանում:

Հայտնի փաստ է, որ զբոսաշրջության կայուն զարգացումը ենթադրում է երեք կարևոր սկզբունքների փոխկապվածություն. դրանք են. տնտեսական զարգացում, բնական ու մարդածին ժառանգության անխաթարության ապահովում և ընդունող հասարակությունների արժեքների, ավանդույթների հարգում կամ պահպանում: Բնական ու մարդածին ժառանգությունը համարվում է Արցախի զբոսաշրջության զարգացման կարևորագույն ռեսուրսը և հենց այդ նկատառումներից ելնելով՝ մենք դիրքավորում ենք Արցախը՝ որպես հարուստ և ունիկալ ժառանգություն ունեցող զբոսաշրջային ուղղություն, որը հեռու է մասսայական զբոսաշրջային երթուղիներից. երկու խոսքով՝ թաքնված գանձ:

Արցախի զբոսաշրջային նկարագիրը մեծապես ձևավորվում է 3 հիմնական ասպեկտներով՝ պատմամշակութային, բնական և էթնոգրաֆիկ: Դրա ձևավորման գործում առանձնակի դեր են խաղում հայկական ճարտարապետության գոհարներ համարվող հուշարձանները, բնական լանդշաֆտը, հատուկ էկոհամակարգեր ունեցող տարածքները:

Առավել կարևոր կամ վտանգված հուշարձանների տարածքներում արգելոցների հիմնումը թույլ է տվել ոչ միայն հավուր պատշաճի պահպանել ու կառավարել դրանք, այլև դրական ազդեցություն է ունեցել զբոսաշրջության զարգացման տեմպերի վրա և խթանել զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացմանը:

Արցախում գործում է 5 պետական արգելոց՝ տարբեր պատմական ժամանակաշրջանների ուրույն ճարտարապետական կոթողներով եւ բնական հուշարձաններով:

Արցախի տարածքում առաջին պետական պատմամշակութային արգելոցը ստեղծվել է հայտնի Տիգրանակերտի հնավայրի տարածքում, Ասկերանի և Մարտակարետի շրջանների վարչական տարածքներում 2008 թվականին: Տիգրանակերտը՝ որպես պատմաճարտարապետական համալիր, համարվում է հնագիտական տուրիզմի կենտրոն ոչ միայն Արցախի այլև Հայաստանի համար

Բացի հելլենիստական ճարտարապետության բոլոր կանոններով կառուցված քաղաք լինելու, այն նաև եղել է այգիների մեջ թաղված սպիտակ քաղաք և տեսանելի է եղել շատ հեռվից: Դրա տարածքում գտնվող Արքայական աղբյուրներն իրենց շուրջը ստեղծված այգի-պուրակով, առվակներով և ջրավազաններով հռչակված են եղել որպես հանգստի և ժամանցի իդեալական վայր: Արգելոցի ստեղծման հետ մեկտեղ վերոհիշյալ պուրակի տարածքը բարեկարգվել է, մշակվել է դրա տարածքում դենդրոպարկի հիմնման ծրագիր, որն արդեն իսկ իրագործվում է: Ծրագրին իր աջակցությունն է ցուցաբերել նաև Արմենիա Թրի Պրոջեկտ կազմակերպությունը:

Հնավայրի տարածքում արգելոցի ստեղծումը ոչ միայն թույլ է տվել հավուր պատշաճի վերահսկել այն, կազմակերպել հնագիտական պեղումներն ու հուշարձանների պահպանությանն ուղղված զանազան միջոցառումներ, այլ նաև արդյունավետ իրականացնել համապատասխան զբոսաշրջային առաջարկի ձևավորումը: Արգելոցի տարածքում ստեղծված պայմանները՝ թանգարանը, հնագիտական գոտին, հանգստի և ժամանցի վայրերը, այցելուներին հնարավորություն են տալիս ոչ միայն ավելի հետաքրքիր ժամանց կազմակերպել, այլև դրա համար երկար ժամանակ հատկացնել: Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ շատ կարճ ժամանակահատվածում Տիգրանակերտի արգելոցը դարձել է երկրի ամենաայցելվող զբոսաշրջավայրերից մեկը: Այսպիսով, Տիգրանակերտի հայտնաբերմամբ եւ արգելոցի ստեղծումով Արցախում ձեւավորվել է մի նոր զբոսաշրջավայր եւս, որն իր ազդեցությունն է թողել զբոսաշրջության կայուն զարգացման վրա:

Մինչդեռ, նոր արգելոցների ստեղծումը մեծապես նպաստել է ոչ միայն պատմամշակութային զբոսաշրջության, այլեւ զբոսաշրջության նոր ձևերի զարգացմանն Արցախում: Այսպես, 2011 թվականին Շուշիի և Ասկերանի շրջանների վարչական տարածքում “Հունոտի կիրճ” բնապատմական արգելոցի ձեւավորումը մեծ խթան հանդիսացավ էկոտուրիզմի զարգացման համար: Արգելոցի բնական եւ մարդածին ժառանգությունը, եւ դրանց շարքում, ճարտարապետական հուշարձանները հավուր պատշաճի ներկայացնելու հնարավորությունների ընձեռնումը, այն դարձրեց էկոտուրիզմի կենտրոններից մեկը: Արգելոցը մենք դիրքավորում ենք որպես բնական և պատմաճարտարապետական ամբողջական համալիր, որն իր մեջ ընդգրկում է 18-19 դարի շինություններ եւ բազմաթիվ բնական

հուշարձաններ: Համալիրն իր մեջ ներառում է “Հունոտ” գյուղատեղին, որը վերաբերում է 18-20-րդ դդ-ին, ինչպես նաեւ 18-րդ դարի սկզբին կառուցված Հունոտի կամարաձեւ կամուրջը և Հունոտի ու դրա շրջակայքի մոտ 12 ջրաղացների ավերակները:

Արգելուցում կազմակերպված 5 երթուղիները նախատեսված են տարբեր հետաքրքրություններ ունեցող այցելուների համար: Արգելոցի կազմակերպումը անգամներով ավելացրեց զբոսաշրջավայր այցելող մարդկանց քանակը: Այժմ Հայաստանի լեռնագնացների միության հետ մեկտեղ իրականացվում է Շուշիից Քարին տակ ձգվող քայլուղու զարգացման նախագիծը, որը նաև հանդիսանում է ավելի մեծ՝ Ճանապարհ Թրեյլ համաարցախյան քայլարշավային երթուղու զարգացման ծրագրի մաս:

Այսպիսով լինելով Արցախի գլխավոր տեսարժան վայրերի շարքում՝ արգելոցը վեր է ածվել բացօթյա ակտիվություններ նախընտրող զբոսաշրջիկների կողմից հաճախ այցելվող վայր, թե իր բնապատմական արժեքների և թե մայրաքաղաքից ոչ հեռու գտնվելու պատճառով:

Զբոսաշրջության զարգացման տեսանկյունից կարևոր հաջորդ արգելոցը Արցախի կառավարության կողմից ձևավորվել է 2013 թվականին Հադրութի շրջանի Տողի մելիքական ապարանքի տարածքում:

Արգելոցը Արցախի Հարավային զբոսաշրջային երթուղու կարևոր մաս է կազմում: “Տողի Մելիքական ապարանք” արգելոցի զարգացումը իրականացվում է զուգահեռաբար դրա վերականգնման և զբոսաշրջային ռեսուրսների ստեղծման ու օգտագործման միջոցով: Տող գյուղը հանդիսանում է յուրահատուկ զբոսաշրջային կլաստեր, որը ներառելով տարբեր տեսակի զբոսաշրջային ռեսուրսներ նաև կարող է հանդես գալ որպես տարածաշրջանային կենտրոն, քանի որ գտնվում է տարբեր տեսակի քայլուղիների, զբոսաշրջային երթուղիների և այնպիսի զբոսաշրջավայրերի մոտակայքում, ինչպիսիք են Գտչավանք վանական համալիրը, Ազոխի քարանձավը, Մեծ Թաղերի ազգագրական կենտրոնը եւ այլն : Արգելոցի ձեւավորումը աշխուժացրեց Հարավային զբոսաշրջային երթուղին, որն մինչ այդ հազվադեպ էր մտցվում զբոսաշրջիկների այցելությունների ծրագրերում : Այն դարձավ երկրի զբոսաշրջության զարգացման գործոններից մեկը :

2014 և 2016 թվականներին ստեղծված Ազոխի քարանամձավ բնապատմական Տյաքի պատմամշակութային արգելոցները ևս գտնվում են հադրութի շրջանում: Զբոսաշրջության զարգացման տեսանկյունից դրանք դեռ արժևորման փուլում են և դժվար է դեռ գնատահատել դրանց իրական պոտենցիալը: Ինչպես մնացած արգելոցները, դրանք ևս ստեղծվել են հատուկ ուսումնասիրման և պահպանական պայմանակարգի սահմանման անհրաժեշտությամբ պայմանավորված, ինչը հնարավորություն է տալու ապահովել հուշարձանախմբերի հնարավորինս

անաղարտ պահպանությունը և դրա նպատակային օգտագործումը՝ հետագա զարգացման նախադրյալներ ստեղծելով։

Վերոհիշյալ արգելոցները տարբերվելով իրարից պատմամշակութային և բնական հատկություններով, ունեն ընդհանրություններ զբոսաշրջային տեսանկյունից։ Գտնվելով Արցախի տարբեր մասերում, և իրենցից ներկայացնելով կարևոր զբոսաշրջավայրեր, դրանք մեծ դեր են խաղում զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացման գործում, կրոնական վայրերից բացի հնարավորություն ընձեռնելով նաև այցելել աշխարհիկ պատմաճարտապետական ու բնական հուշարձաններ։

Ինչպես արդեն նշվեց, զբոսաշրջությունը մեծապես կախված է -տվյալ երկրում հարուստ ժառանգության առկայությունից։ Եվ ընդհակառակը, զբոսաշրջությունը կարող է կարևոր ներդրում ունենալ պատմամշակութային և բնական ժառանգության պահպանության և կառավարման գործում, այն կարող է նպաստել ավանդույթների պահպանմանը և ֆինանսավորել ժառանգության պահպանումը։ Հաճախ մտավախություններ են հնչում պատմական ժառանգության վրա զբոսաշրջության բացասական ազդեցության մասին։ Մանավանդ երբ խոսքը վերաբերում է վտանգված հուշարձաններին, ինչպես նաև հնագիտական վայրերին, որոնք նախատեսված չեն մեծ քանակությամբ զբոսաշրջիկ ընդունելու համար։ Զբոսաշրջության քառսային զարգացումը մեծ վտանգ է ներկայացնում թե պատմամշակութային թե բնական լանդշաֆտի պահպանման համար։ Մյուս կողմից կայուն զբոսաշրջության զարգացման պարագայում կարելի է հասնել ոչ թե այդ երկու ոլորտների հակամարտության, այլ ընդհակառակը՝ յուրահատուկ սիմբիոզի։ Այդ նկատառումները ևս հաշվի առնելով Արցախը ևս ընտրել է կայուն զբոսաշրջության զարգացման ուղին։